

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ինդոնեզիայի Հանրապետության Կառավարությունը,

ցանկանալով կնքել Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիր, պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 2

ՀԱՐԿԵՐ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային միավորների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

- ա) Հայաստանի դեպքում՝
 - i) շահութահարկ,
 - ii) եկամտահարկ,
 - iii) գույքահարկ,
 - iv) հողի հարկ,

- բ) Ինդոնեզիայի դեպքում՝
 - i) եկամտահարկ:

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև ըստ էության համանման բոլոր հարկերի նկատմամբ, որոնք կահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց

կծանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված նշանակալի փոփոխությունների մասին:

ՀՈՂՎԱԾ 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» տերմինը, համատեքստից կախված, նշանակում է՝ Հայաստան կամ Ինդոնեզիա,

i) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածք,

ii) «Ինդոնեզիա» տերմինը նշանակում է՝ Ինդոնեզիայի Հանրապետության օրենքներով սահմանված՝ Ինդոնեզիայի Հանրապետության տարածք,

բ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

գ) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտվում է որպես իրավաբանական անձ,

դ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում են բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

զ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և հարկային պետական ծառայության պետ կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,

ii) Ինդոնեզիայի դեպքում՝ ֆինանսների նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

է) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն և ասոցիացիա, որոնք Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել են իրենց այդ կարգավիճակը:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառվելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ Պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը:

ՀՈԴՎԱԾ 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, կառավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա:

2. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա մշտական կացարան ունի երկու Պետություններում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իր մշտական կացարանը, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձն է հանդիսանում կամ ոչ մեկինը չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ձգտում են հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որի օրենքների համաձայն ստացել է իր, որպես այդպիսին, կարգավիճակը:

ՀՈԴՎԱԾ 5 ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

- ա) կառավարման վայր,
- բ) մասնաճյուղ,
- գ) գրասենյակ,
- դ) գործարան,
- ե) արտադրամաս,
- զ) որպես առևտրային կետ օգտագործվող պահեստ կամ տեղամաս,
- է) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների մշակման, շահագործման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր,

բնական պաշարների մշակման կամ շահագործման համար օգտագործվող փորող սարքեր կամ մեքենանոր:

3. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաև.

ա) շինարարական հրապարակ, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիր կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեություն, սակայն միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է վեց ամիսը,

բ) ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները՝ այդ նպատակով ձեռնարկությունում վարձած ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, երբ այդ բնույթի գործունեությունը (միևնույն կամ դրա հետ կապված ծրագրի) այդ երկրում ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում շարունակվում է ընդհանուր առմամբ 120 օրը գերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ կհամարվի, որ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 7-րդ կետը) տարբերվող անձը Պայմանավորվող պետությունում գործում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված Պետությունում՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե այդպիսի անձը՝

ա) այդ Պետությունում ունի և սովորաբար օգտագործում է այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն՝ բացառությամբ այն դեպքի, եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության, կամ

բ) չունի այդպիսի իրավասություն, սակայն առաջինը հիշատակված Պետությունում սովորաբար օգտագործում է ապրանքների կամ արտադրանքի պահեստ, որտեղից ձեռնարկության անունից պարբերաբար իրականացնում է ապրանքների կամ արտադրանքի առաքում, կամ

գ) այդ Պետությունում ձեռնարկության համար արտադրում կամ մշակում է ձեռնարկությանը պատկանող ապրանքներ կամ արտադրանք:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ապահովագրական ընկերությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, համարվում է մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե անկախ կարգավիճակով գործակալ հանդիսացող անձից տարբերվող անձի միջոցով այդ մյուս Պայմանավորվող պետությունում ընդունում է ապահովագրավճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից:

7. Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չի համարվում մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Սակայն, սույն կետի իմաստով, այդպիսի անձը չի դիտվի որպես անկախ կարգավիճակով գործակալ, եթե այդպիսի անձի գործունեությունն ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի դարձնում մյուս ընկերության մշտական հաստատությունը:

ՀՈԴՎԱԾ 6 **ԵԿԱՍՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Նավերը կամ օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7 ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է՝

ա) այդ մշտական հաստատությանը, կամ

բ) այդ մյուս Պետությունում այնպիսի ապրանքների և արտադրանքի վաճառքին, որոնք նույնն են կամ նման են մշտական հաստատության կողմից վաճառվողներին, կամ

գ) այդ մյուս Պետությունում իրականացվող այնպիսի ձեռնարկատիրական գործունեությանը, որը նույնն է կամ նման է մշտական հաստատության միջոցով իրականացվող գործունեությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեությունը՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ նրանից՝ այդ ծախսերը կրել է այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ վայրերում:

Սակայն չի թույլատրվի նվազեցնել այն գումարները, եթե այդպիսիք կան, որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում)՝ ձեռնարկությանը արտոնագրերից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ նման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ կառավարման համար միջնորդավճարի տեսքով կամ բացառությամբ բանկերի կողմից մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց տոկոսների տեսքով: Նմանապես մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի մշտական հաստատության կողմից ձեռնարկությանը վճարված գումարները (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում)՝ արտոնագրերից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ նման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ կառավարման համար միջնորդավճարի տեսքով կամ բացառությամբ բանկերի կողմից մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

4. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից իր ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնվելու պատճառով:

5. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը միևնույն եղանակով որոշվում է ամեն տարվա համար, եթե հակառակն անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

6. Որքանով Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելի այդ Պայմանավորվող պետությանը հաշվառել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակի միջոցով:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

ՀՈԴՎԱԾ 8 ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈՆԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից առաջացած շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում այդ նավերը կամ օդանավերը շահագործողը:

2. 1-ին կետում հիշատակված նավերի կամ օդանավերի շահագործումից առաջացած շահույթը ներառում է նաև միջազգային փոխադրումներում բեռնարկղերի (բեռնարկղերի և փոխադրմանը վերաբերող սարքավորումների) պահպանումը կամ օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 9 ԶՈՒԳՈՐԴՎԱԾ ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է

ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի այլ դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են խորհրդակցել միմյանց հետ:

ՀՈՒՎԱԾ 10 ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր հանդիսանում է այն ընկերությունը, որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 25 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն այդ սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ: Սույն կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած բաժնետոմսից կամ այլ՝ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենսդրության, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահ-

հաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ:

Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս Պետությունը ընկերության կողմից վճարված շահաբաժինները չի կարող ենթարկել որևէ հարկման, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ շահաբաժինները վերագրելի են այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

ՀՈԴՎԱԾ 11 ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, այդ Պետության օրենքներին համաձայն, բայց այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը, եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդ սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության Կառավարության, ներառյալ այդ Պետության տեղական իշխանության մարմինների, վարչատարածքային ստորաբաժանման, կենտրոնական բանկի կամ այդ Կառավարության կողմից վերահսկվող ցանկացած ֆինանսական հաստատության, որի կապիտալը ամբողջությամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության Կառավարությանը, կողմից ստացվող տոկոսները պետք է ազատվեն հարկումից առաջինը հիշատակված Պետությունում Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների միջև ժամանակ առ ժամանակ ձեռք բերվող համաձայնության հիման վրա:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի պարտապահանջից եկամուտ՝ անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապահի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, կառավարական արժեթղթերից եկամուտ և

պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից եկամուտ՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարները կամ մրցանակները:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1-ին կետի «ա» ենթակետին վերաբերող այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ կամ «բ» ենթակետին վերաբերող վաճառքների կամ «գ» ենթակետին վերաբերող ձեռնարկատիրական գործունեության հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, այդ Պետության վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է տոկոսների վճարման պարտավորությունը, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12 **ՌՈՅԱԼԹԻ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համապատասխան. սակայն եթե ստացողը ռոյալթիների փաստացի

սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների և ռադիո- կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում են ռոյալթիները, իրականում կապված են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1-ին կետի «ա» ենթակետին վերաբերող այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ կամ «բ» ենթակետին վերաբերող վաճառքների կամ «գ» ենթակետին վերաբերող ձեռնարկատիրական գործունեության հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը այդ Պետությունն է, այդ Պետության վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթիներ համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում,

ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

ՀՈԴՎԱԾ 13 ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՆ

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Նախորդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

ՀՈԴՎԱԾ 14 ԱՆԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա իր գործունեությունը պարբերաբար իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող պետությունում իր տրամադրության տակ ունի հաստատուն բազա, կամ ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում մյուս Պետությունում նրա ներկայության ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները գերազանցում են ընդհանուր առմամբ 120 օրը: Եթե նա ունի այդպիսի հաստատուն բազա կամ գտնվել է այդ մյուս Պետությունում վերը նշված ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, ապա այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային, կամ որը ստացվել է այդ մյուս Պետությունում վերը նշված ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների ընթացքում:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, ճարտարագետների, իրավաբանների, ինժեներների, ատամնաբույժների, ճարտարապետների և հաշվապահների անկախ գործունեությունը:

ՀՈԳՎԱԾ 15 ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ (Տնօրենների հոնորարներ), 18-րդ (Կենսաթոշակներ), 19-րդ (Պետական ծառայություններ) և 20-րդ (Ուսուցիչներ և հետազոտողներ) հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող օրացուցային տարում գտնվում է այդ մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում, և

բ) վարձատրությունը վճարվում է այդ մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԳՎԱԾ 16 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԳՎԱԾ 17 ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՍԱՐՁԻԿՆԵՐ

1. Չնայած 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին՝ մյուս

Պայմանավորվող պետությունում իրականացրած անձնական գործունեությունից, որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ, Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործիչ կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործիչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված՝ Պայմանավորվող պետությունների միջև մշակութային պայմանագրի կամ պայմանավորվածության շրջանակներում իրականացվող գործունեությունից ստացված եկամուտը ազատվում է հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է այդպիսի գործունեությունը, եթե այցելությունը ամբողջությամբ կամ զգալիորեն ֆինանսավորվում է Պայմանավորվող պետություններից որևէ մեկի կամ երկուսի կամ նրանց վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմնի կամ հասարակական հաստատությունների միջոցների հաշվին:

ՀՈԳՎԱԾ 18 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի (Պետական ծառայություններ) 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին մյուս Պայմանավորվող պետությունում նախկինում իրականացրած վարձու աշխատանքի կամ մատուցած ծառայությունների դիմաց այդ մյուս Պայմանավորվող պետության աղբյուրներից վճարված բոլոր կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները, ինչպես նաև այդ ռեզիդենտին այդպիսի աղբյուրներից վճարված ցանկացած տարեկան ռենտան կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԳՎԱԾ 19 ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ հասարակական հիմնադրամների միջոցներից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված կենսաթոշակից տարբերվող վարձատրությունները կարող են հարկվել միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

ի) հանդիսանում է այդ Պետության ազգային անձը, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) և 16-րդ (Տնօրենների հոնորարներ) հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

3. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամների միջոցներից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարված որևէ կենսաթոշակ կարող է հարկվել միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ մյուս Պետության ռեզիդենտն ու ազգային անձը:

ՀՈԴՎԱԾ 20

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՆԵՐ

1. Մինչև Պայմանավորվող պետություն ժամանելուն անմիջապես նախորդող պահը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացած ֆիզիկական անձը, որը առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության Կառավարության կամ համալսարանի, քոլեջի, դպրոցի, թանգարանի, կամ այլ համանման մշակութային հաստատության հրավերով կամ մշակութային փոխանակման պաշտոնական ծրագրի շրջանակներում գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ազատվում է հարկումից այդ Պայմանավորվող պետությունում այդպիսի հաստատությունում բացառապես դասավանդման, դասախոսությունների կամ հետազոտումների համար ստացած վարձատրությունների գծով՝ իր պարտականությունների ստանձնման ժամկետից երկու հաջորդական տարին չգերազանցող ժամանակահատվածի համար:

2. Մույն հոդվածը չի կիրառվում հետազոտությունից ստացվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունը իրականացվում է ոչ թե հասարակական, այլ առավելապես որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

ՀՈԴՎԱԾ 21

ՈՒՍԱՆՈՒՆԵՐ ԵՎ ՍՏԱԺՈՐՆԵՐ

1. Մինչև Պայմանավորվող պետություն ժամանելուն անմիջապես նախորդող պահը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացած կամ այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող և առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում բացառապես ուսանելու կամ մասնագիտացման նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի կողմից ստացվող վճարումները, որոնք նախատեսված են ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար, այդ Պայմանավորվող պետությունում չեն հարկվում, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պայմանավորվող պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1-ին կետում չներառված դրամաշնորհների, կրթաթոշակների և վարձու աշխատանքից ստացված վարձատրության նկատմամբ 1-ին կետում հիշատակված ուսանողը կամ ստաժորը, բացի դրանից, այդպիսի ուսման կամ պրակտիկայի ընթացքում իրավունք ունի հավակնելու նույնպիսի հարկային ազատումների, զեղչերի և նվազեցումների, ինչպիսիք թույլատրելի են նրա այցելվալար Պայմանավորվող պետության ռեզիդենտներին:

ՀՈԴՎԱԾ 22 ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի (Եկամուտ անշարժ գույքից) 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, իրականում վերագրելի է այդպիսի մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տարրերը նույնպես կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 23 ԳՈՒՅՔ

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող նավերով կամ օդանավերով իրականացվող և այդպիսի ծովային և գետային նավերի և օդանավերի,

ճանապարհային և երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Ընկերության բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը, որի ակտիվները գլխավորապես կազմված են Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

ՀՈԴՎԱԾ 24 ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է եկամուտ կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված Պետությունը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով «այդ մյուս Պետությունում վճարված հարկ» տերմինը համարվում է ներառող հարկի գումարը, որը կվճարվեր այդ մյուս Պետությունում, եթե ազատված կամ նվազեցված չլիներ այդ մյուս Պետության օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 25 ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան միևնույն հանգամանքների դեպքում այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել մյուս Պետության ազգային անձինք: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը) դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին հարկման նպատակներով այնպիսի անձնական զեղչերի, նվազեցումների և պակասեցումների թույլատրումը պարտավորեցնող դրույթ, որոնք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի (Չուգորդված ձեռնարկություններ) 1-ին կետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 6-րդ կետի կամ 12-րդ հոդվածի (Ռոյալթիներ) 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթիները և այլ վարձատրությունները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման այն նույն պայմաններով, ինչպես նվազեցվում են առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես պարտքը՝ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված Պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն սույն Համաձայնագրում ներառված հարկերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 26 **ՓՈԽՀԱՄԱՉԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 25-րդ հոդվածի (Անխտրականություն) 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի դրույթներին

չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով: Իրավասու մարմինները խորհրդակցությունների միջոցով կմշակեն ընդունելի երկկողմ ընթացակարգեր, պայմաններ, մեթոդներ ու ձևեր սույն հոդվածով նախատեսված փոխհամաձայնեցման ընթացակարգի կիրառման նպատակով:

ՀՈՂՎԱԾ 27 **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ**

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Համաձայնագրի կամ Համաձայնագրում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացած հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին, մասնավորապես, այդպիսի հարկերից խուսափելը կանխելու համար: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկատվությունը: Սակայն եթե տեղեկությունը ի սկզբանե փոխադրող Պետությունում դիտվում է որպես գաղտնի, այն կարող է հաղորդվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Համաձայնագրում ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար, սակայն կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքների կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնել տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրային, աշխատանքային, արդյունաբերական, կոմերցիոն, մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

ՀՈԴՎԱԾ 28

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱՆՉՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կձգտի հավաքել մյուս Պայմանավորվող պետության անունից այդ Պայմանավորվող պետության կողմից սահմանված հարկերը՝ որպես ապահովում այն պայմանի, որ այդ մյուս Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրվող հարկից ազատումը կամ հարկի դրույքաչափի իջեցումը չօգտագործվի այն անձանց կողմից, որոնց այդպիսի արտոնություններ շնորհված չեն:

2. Սույն հոդվածը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ կիրառել այնպիսի վարչական միջոցառումներ, որոնք չեն համապատասխանում յուրաքանչյուր Պայմանավորվող պետության վարչական կարգավորմանն ու գործավարությանը, կամ որոնք հակասում են առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ պետական քաղաքականությանը:

ՀՈԴՎԱԾ 29

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

ՀՈԴՎԱԾ 30

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի յուրաքանչյուր Պետության ներքին օրենսդրությամբ ուժի մեջ մտնելու համար սահմանված ընթացակարգի պահանջները բավարարելու մասին համապատասխան կառավարությունների կողմից գրավոր ծանուցումներից վերջինը ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը գործում է.

ա) աղբյուրի մոտ զանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացվող եկամուտների նկատմամբ, և

բ) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող՝ հարկման ենթակա տարիների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 31
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մինչև դադարեցվի Պայմանավորվող պետության կողմից:

Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագիրը՝ դիվանագիտական ուղիներով՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվանից հինգ տարի անց՝ ցանկացած օրացուցային տարվա հունիսի 30-ին կամ մինչև հունիսի 30-ը, Համաձայնագրի դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով:

Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը.

ա) ադրյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

բ) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող՝ հարկման ենթակա տարիների նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ որի՝ պատշաճ ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Ջակարտա քաղաքում 2005 թվականի հոկտեմբերի 12-ին, երկու բնօրինակով, հայերեն, ինդոնեզերեն և անգլերեն: Ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման շուրջ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ինդոնեզիայի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիրը ստորագրելու պահին ներքոստորագրյալները պայմանավորվեցին, որ հետևյալ դրույթները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը.

1. 5-րդ հոդվածի 5.գ կետի առնչությամբ՝

պայմանավորված է, որ ապրանքի արտադրում կամ մշակում նշանակում է ցանկացած գործունեություն, որը փոխում է ապրանքի բնույթը կամ հատկանիշները:

2. 7-րդ հոդվածի առնչությամբ՝

չնայած Համաձայնագրի 25-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին՝ այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը մյուս Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, մշտական հաստատության շահույթը կարող է ենթարկվել լրացուցիչ հարկի այդ մյուս Պետությունում՝ այդ Պետության օրենքի համաձայն, սակայն այդպիսով գանձվող լրացուցիչ հարկը չի գերազանցի այդ մյուս Պետությունում սահմանված եկամտահարկի և այլ եկամտային հարկերի նվազեցումներից հետո այդպիսի շահույթի գումարի 10 տոկոսը:

3. 7-րդ հոդվածի առնչությամբ՝

սույն Արձանագրության նախորդ կետի դրույթները չեն ազդի Ինդոնեզիայի Կառավարության, նրա պետական կառավարման մարմնի կամ համապատասխան պետական՝ նավթի և գազի ընկերության կամ ցանկացած այլ միավորի կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի հետ կնքված՝ նավթի, գազի կամ արդյունահանման այլ բնագավառի հետ կապված ցանկացած արտադրության բաշխման և աշխատանքային պայմանագրերում (կամ ցանկացած այլ համանման պայմանագրերում) տեղ գտած դրույթների վրա:

4. 9-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ՝

Պայմանավորվող պետությունները չեն փոխելու ձեռնարկության շահույթը 2-րդ կետում նշված պայմանների դեպքում իրենց հարկային օրենքներով ամրագրված ժամկետների ավարտից հետո:

5. 16-րդ հոդվածի առնչությամբ՝

վարձատրությունը, որը ստանում է այն անձը, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, ընկերությունից ամենօրյա կառավարչական կամ տեխնիկական բնույթի պարտականությունների կատարման համար կարող է հարկվել 15-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Կատարված է Ջակարտա քաղաքում 2005 թվականի հոկտեմբերի 12-ին, երկու բնօրինակով, հայերեն, ինդոնեզերեն և անգլերեն. տեքստերը լիովին հավասարազոր են: Մեկնաբանելիս տարաձայնություններ առաջանալու դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. ապրիլի 12-ին